2020թ. ապրիլ ամսվա իրավական թարմացումներ

LEGELATA
LAW FIRM

Բովանդակություն:

1.ՀՀ Աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխություններ
2.«Դեղերի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններ
3.Կառավարության՝ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների կանխարգելման միջոցառումներ

Հեռ: (+374 11) 520 510
Էլ–փեստ: infor@legelata.am
Կայք: www.legelata.am

Հասցե: 0010, ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի պլազա Բիզնես Կենտրոն, գրասենյակ 412

Փոփոխություններ ՀՀ Աշխատանքային Օրենսգրքում

(ընդունվել են երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ)

Քանի որ մինչ այս ՀՀ Աշխատանքային օրենսգրքում ամրագրված չեն եղել արտակարգ իրավիճակում աշխատանքի հեռավար եղանակով կազմակերպման դրույթներ, ինչպես նաև, պայմանավորված արտակարգ դրության ընթացքում հնարավոր սահմանափակումներով՝ աշխատողների համար կարող է օբյեկտիվ պատճառներով հնարավոր չլինել ժամանակին, լրիվ աշխատանքայինօրով կամ ընդհանրապես աշխատանքի ներկայանալը, սույն փոփոխություններով սահմանվում է՝

• Հեռավար եղանակով իրականացվող աշխատանքի հասկացությունը, որի դեպքում ամբողջությամբ պետք է պահպանվի աշխատակցի աշխատավարձը,

• Հարկադիր պարապուրդի ընթացքում աշխատավարձի վճարման կարգը, ինչպես նաև արտակարգ դրության իրավիճակում աշխատանքի կազմակերպման այլ հնարավորություններ:

• Ոչ աշխատողի մեղքով հարկադիր պարապուրդի դեպքում աշխատողին առնվազն է վճարվում մինչեւ պարապուրդը նրա միջին ժամային աշխատավարձի երկու երրորդի չափով ներկայիս իմպերատիվ կարգավորման փոխարեն, որն ամրագրում է, որ նման դեպքում վճարվում է աշխատավարձի երկու երրորդի չափով:

• Անհաղթահարելի ուժ համարվող պատճառներով առաջացած պարապուրդի համար գործատուն ոչ թե չի վճարում այլ կարող է չվճարել:

Նախատեսվում է ՀՀ Աշխատանքային օրենսգրքում ավելացնել նոր 33.1 հոդված, որով կնախատեսվի պետական լիազոր մարմնի իրավասությունը իրականացնել վերահսկողություն և անհրաժեշտության դեպքում կիրառել համապատասխան պատասխանատվության միջոցներ ՝ անձանցից ստացված բողոքի, կամ իրավախախտումների վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված տեղեկության առկայության դեպքում:

<u>Հեռավար աշխատանքի հասկացությունը:</u>

Նոր ՝ 106.1 հոդվածը սահմանում է հեռավար աշխատանքի հասկացությունը հետևյալ բովանդակությամբ՝ «Հեռավար եղանակով իրականացվող աշխատանքը տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների եւ արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքների կանխարգելման կամ դրանց հետեւանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում ոչ աշխատանքի վայրից իրականացվող աշխատանքն է, այն դեպքում, երբ այդ հանգամանքներով պայմանավորված հնարավոր չէ ապահովել աշխատանքի վայրում այդ աշխատանքների իրականացումը»: Հեռավար եղանակով կատարվող աշխատանքը չի հանդիսանում աշխատանքի էական պայմանների փոփոխություն: Սահմանվում է նաև, որ այն դեպքում, եթե հնարավոր չէ շարունակել աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները, այդ թվում՝ հեռավար եղանակով, չօգտագործված ամենամյա արձակուրդի օրեր ունենալու պարագայում՝ աշխատողի պահանջով գործատուն աշխատողին տրամադրում է ամենամյա արձակուրդ:

Աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքը:
ՀՕ 114-ի 1-ին մասը, որը սահմանում է գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքը, նախատեսվում է ավելացնել նոր կետերով, որոնք են
5) տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների,
հրդեհների եւ արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքների կանխարգելման կամ դրանց հետեւանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում, եթե այդ դեպքերով պայմանավորված՝ աշխատողը չի ներկայացել աշխատանքի կամ աշխատանքի է ներկայացել ոչ լրիվ աշխատանքային օրով.
6) ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատությունների համար նախատեսված արձակուրդների՝ չպլանավորված տեղափոխման կամ չպլանավորված տրամադրման ժամանակահատվածում, եթե մինչեւ տասներկու տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով՝ աշխատողը չի ներկայացել աշխատանքի կամ աշխատանքի է ներկայացել ոչ լրիվ աշխատանքային օրով:

Հարկադիր պարապուրդի ժամանակ աշխատավարձի վճարման կարգը:
Օրենսգրքի 186-րդ հոդվածը, որը կարգավորում է պարապուրդի ժամանակ վճարման կարգը, նախատեսվում է լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով՝
«Տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների եւ արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքների կանխարգելման կամ դրանց հետեւանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումը, որոնց դեպքում հնարավոր չէ իրականացնել աշխատանքային պարտականությունները, համարվում է սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված անհաղթահարելի ուժ:»

Նախատեսվելու է հատուկ դեպքերում աշխատանքի վարձատրության կարգ (187.1), մասնավորապես՝
«1. Եթե տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների եւ արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքների կանխարգելման կամ դրանց հետեւանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում՝ այդ դեպքերով պայմանավորված՝ աշխատողը չի ներկայացել աշխատանքի կամ աշխատանքի է ներկայացել ոչ լրիվ աշխատանքային օրով, ապա աշխատանքը վարձատրվում է առնվազն փաստացի աշխատած ժամանակին կամ կատարված փաստացի աշխատանքին համապատասխան:
2. Ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատությունների համար նախատեսված արձակուրդների՝ չպլանավորված տեղափոխման կամ չպլանավորված տրամադրման ժամանակահատվածում՝ մինչեւ տասներկու տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով, ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալու դեպքում աշխատողի աշխատավարձն ամբողջությամբ պահպանվում է, եթե աշխատանքային օրվա ընթացքում աշխատողը բացակայել է մինչեւ երկու ժամ: Սույն մասում նշված դեպքերում աշխատանքային օրվա ընթացքում երկու ժամից ավելի բացակայելու, ինչպես նաեւ ամբողջ աշխատանքային օրը աշխատանքի չներկայանալու դեպքում աշխատանքը վարձատրվում է առնվազն փաստացի աշխատած ժամանակին կամ կատարված փաստացի աշխատանքին համապատասխան:

Աշխատանքային կարգապահության խախտումը:
Սահմանվելուեն աշխատանքայինկարգապահության խախտման հետևյալ կարգավորումները (հոդված 220)՝
1. Աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

2. Աշխատանքային կարգապահության խախտում չի համարվում.
1) տարերային աղետների,
տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների եւ արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքների կանխարգելման կամ դրանց հետեւանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում այդ դեպքերով պայմանավորված աշխատողի աշխատանքի չներկայանալը կամ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալը.
2) ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատությունների համար նախատեսված արձակուրդների՝ չպլանավորված տեղափոխման կամ չպլանավորված տրամադրման ժամանակահատվածում մինչեւ տասներկու տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով աշխատողի աշխատանքի չներկայանալը կամ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալը:»

Այսպիսով ՝ սույն փոփոխություններով սահմանվելու են արտակարգ դրության իրավական ռեժիմում աշխատակցի իրավունքների պաշտպանության նոր երաշխիքներ:համապատասխան:»

Փոփոխություններ ՀՀ «Դեղերի մասին» օրենքում

Հաշվի առնելով արտակարգ դրության իրավական ռեժիմի հաստատումը, փոփոխություններ են կատարվել ՀՀ «Դեղերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասում, մասնավորապես, սահմանվել է, որ «Դեղերի մեծածախ իրացման գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են լիցենզավորվել դեղերի մեծածախ իրացման լիցենզավորման կարգը ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթամսյա ժամկետում:»
Դեղերի մեծածախ իրացման լիցենզավորման կարգն ուժի մեջ է մտել 2020 թվականի հունվարի 14-ից: Նախկինում նախատեսված եռամսյա ժամկետը երկարաձգվել է ևս 4 ամսով:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 15-րդ միջոցառում
Նախատեսված է ծառատնկման աշխատանքների իրականացման համար, որոնցում ներգրավելու են տեղական բնակչությանը և այդպիսով ստեղծելով լրացուցիչ աշխատատեղեր մեղմել բնակչության եկամուտների կրճատման հետ կապված վտանգները: Աշխատանքների իրականացման ընդհանուր արժեքը կազմում է մոտ 200 մլն դրամ:
Ծառատնկման աշխատանքներին մասնակցած բնակիչներին կտրամադրվի 50 դրամ՝ յուրաքանչյուր կտրոնի պատրաստման և տնկման համար:
Տես՝ https://www.e-gov.am/gov-decrees/item/33911/

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 14-րդ միջոցառում
Ծրագիրը նախատեսված է Հայաստանի պետական և պետակա հավատարմագրում ունեցող բուհերի առկա և հեռակա ուսուցմամբ վճարովի համակարգում սովորող ուսանողների համար:
Նախատեսվում է փոխհատուցել պետական բուհերում առկա ուսուցմամբ սովորող ավարտական կուրսի ուսանողների, որոնք ունեն 90 և ավել տոկոս ՄՈԳ, կիսամյակի ուսման վարձի 100%-ը, իսկ մյուս բոլոր կուրսերի ուսանողները, որոնք ունեն 90 և ավել տոկոս ՄՈԳ, կստանան փոխհատուցում կիսամյակի ուսման վարձի 75%-ի չափով:
Նախատեսվում է զրոյացնել Մայիսի 1-ից տրամադրվող ուսումնական վարկերի այն ուսանողների համար, որոնց ՄՈԳ-ի առավելագույն արժեքը կկազմի 80 և ավել տոկոս:
Իսկ այն ուսանողները, որոնց ՄՈԳ-ի արժեքը ցածր է 80 տոկոսից, կստանան ուսանողական վարկի տոկոսադրույքի 5 տոկոսային կետով սուբսիդավորում, ինչի արդյունքում վարկը հասանելի կլինի 4% տոկոսադրույքով:

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 13-րդ միջոցառում
Որոշումը նախատեսում է սոցիալական աջակցության հետևյալ միջոցառումները սոցիալական և ընտանեկան նպաստների իրավունք ունեցող ընտանիքների համար:
2020 թվականի ապրիլ ամսվա դրությամբ նպաստ ստացող ընտանիքներն օժանդակություն կստանան նպաստի 50%-ի չափով, որի 70%-ը կտրամադրվի կանխիկ վճարման ձևով, իսկ 30%- ը կփոխանցվի որպես բաժանորդի կողմից սպառվող էլեկտրական էներգիայի դիմաց վճար: Եթե շահառուն էլեկտրաէներգիայի ցանցի բաժանորդ չի հանդիսանում, ապա գումարը կտրամադրվի կանխիկ վճարման ձևով:
Տես՝ https://www.e-gov.am/gov-decrees/item/33824/

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 12-րդ միջոցառում
Ծրագիրը նախատեսված է առնվազն 280.000 բաժանորդի աջակցություն
ցուցաբերելու համար:30%-ի չափով աջակցություն կտրամադրվի այն բաժանորդներին, որոնց
2020 թվականի փետրվար ամսվա ծախսը կազմել է՝
բնական գազի սպառում՝ 10.001 - 30.000 դրամ ներառյալ, էլեկտրաէներգիայի սպառում՝ 5.001 -10.000 դրամ ներառյալ:
Տես՝ https://www.e-gov.am/gov-decrees/item/33819/

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 11-րդ միջոցառում
Այս ծրագրի շահառու է հանդիսանում 220 հազար բաժանորդ և 660 հազար քաղաքացի:
Պետությունը կփոխհատուցի ընթացիկ տարվա փետրվար ամսվա բնական
գազի և էլեկտրաէներգիայի գծով ծախսերի 50%-ն այն բաժանորդների համար, որոնք նշված ամսվա ընթացքում ունեցել են մինչև 10.000 դրամ բնական գազի և մինչև 5.000 դրամ էլեկտրաէներգիայի ծախս:
Տես՝ https://www.e-gov.am/gov-decrees/item/33811/

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 10-րդ միջոցառում
Սույն որոշումը նպատակ ունի օժանդակել այն անձանց, ովքեր՝
• 2019-ին հանդիսացել են ընտանեկան ձեռնարկատիրություն կամ ինքնազբաղված
• անձ, իրենց գործունեությունը սկսել են 2020թ-ի հունվարի 1-ից հետո և չեն հանդիսանում անհատ ձեռնարկատեր:
Միջոցառման շահառուներին կտրամադրվի մինչև 136 հազար դրամ միանվագ դրամական օժանդակություն, որի հստակ չափը կախված է տնտեսվարողի՝ 2020թ-ի առաջին եռամսյակի շրջանառության ծավալից: Այն միկրոձեռնարկատերերը, ովքեր իրենց գործունեությունը սկսել են 2020թ-ից և չեն հանդիսանում անհատ ձեռնարկատերեր, ինչպես նաևՀԴՄ հայտ ներկայացրած, սակայն դեռևս ՀԴՄ սարք չունեցող միկրոձեռնարկատերերը աջակցություն կստանան նվազագույն աշխատավարձի՝ 68 հազար դրամի չափով:
Տես՝ https://www.e-gov.am/gov-decrees/item/33845/

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 9-րդ միջոցառում
Շահառու են հանդիսանում մինչև տասնութ տարեկան երեխա ունեցող և մարտի տասներկուսի դրությամբ գրանցված աշխատող չհհանդիսացող անձինք, և ովքեր չեն ընդունվել աշխատանքի մարտի 12-31 ընկած ժամանակահատվածում: Աջակցությունը տրամադրվում է յուրաքանչյուր երեխայի համար 26500 դրամի չափով: Ընտանիքը կարող է հանդիսանալ շահառու, եթե մինչև տարեկան երեխան կամ երեխաները, ինչպես նաև ծնողները /կամ միայնակ ծնողը/ մարտի
12-31ը բնակվել են ՀՀում:
Տես՝https://www.e-gov.am/gov-decrees/item/33694/

Վերապահում:
Սույն տեղեկագրում պարունակվող նյութը տրամադրվում է միայն ընդհանուր տեղեկատվական նպատակների համար և չի պարունակում նկարագրված յուրաքանչյուր հոդվածի համապարփակ վերլուծություն:
Նախքան որևէ գործողություն ձեռնարկելը (կամ չձեռնարկելը), ընթերցողները պետք է դիմեն
իրենց իրավիճակին հատուկ մասնագիտական խորհրդատվություն: Ընկերությունը չի կրում պատասխանատվություն կատարված գործողությունների կամ անգործության համար, որոնք հիմնված են
սույն նյութի բովանդակության վրա: